Անուշ Թասալյան

Զատիկն ու պուտիկը

Վաղո՜ւց, շա՜տ վաղուց աշխարհի բոլոր զատիկներն առանց սև պուտիկների էին՝ կարմիր, ալ կարմիր հագուստով, սև գլխիկով, ոտիկներով ու բարի աչքերով: Նրանք ապրում էին բաց դաշտում՝ գույնզգույն ծաղիկների ու կանաչ թփերի վրա:

Դաշտի վերջում՝ մեծ կաղնիների տակ մի ժամանակ տնակ կար: Այդ տնակում ապրում էր մի ընտանիք՝ հայր, մայր և փոքրիկ տղա: Մայրն ու հայրը առավոտից երեկո զբաղվում էին տնային գործերով, իսկ փոքրիկը խաղում էր: Մի անգամ՝ խաղի ժամանակ գնդակը շատ հեռու գլորվեց, փոքրիկը վազեց դեպի դաշտ՝ գնդակը վերցնելու: Գնդակը գլորվել էլ խոտերի մեջ: Տղան վերցրեց թաց գնդակը ու տեսավ, որ մի շա՜տ սիրուն միջատ նստել է գնդակի վրա: Այդ միջատը զատիկն էր: Փոքրիկը գնդակն ու միջատը վերցրեց ու այդ օրից միասին էին: Սակայն մի անգամ տղան նկատեց, որ տան մոտի դաշտը լի է նույն կարմիր զատիկներով: Նա որոշեց իր զատիկին ճանաչելու համար մի նշան անել: Հանգած կրակի վրայից վերցրեց կիսավառված մի փայտիկ և իր զատիկի կարմիր հագուստի վրա սև մանր պուտեր նկարեց: Այդպես նա տարբերում էր իր միջատին մյուսներից: Օրերն ուրախ էին անցնում, բայց այնպես ստավեց, որ ընտանիքը տեղափոխվեց այլ տուն: Գնդակն ու զատիկը մնացին տան բակում:

Զատիկը դեռ սպասում էր, սպասում . . . Հետո թռավ, գնաց դաշտ, որտեղ իր մյուս ընկերներն էին: Բայց տխուր էր, հասկանում էր, որ էլ չի տեսնի փոքրիկին:

Մի օր էլ, գայրույթի պահին իրեն թափ տվեց, որ հագուստի սև պուտերն անցնեն, չտարբերվի մյուս զատիկներից . . . Բայց, ո՜վ հրաշք: Սև պուտերը թռան օդ, շատացան արևի շողերից ու թափվեցին դաշտի բոլոր զատիկների և սպիտակ թիթեռների վրա: Այդ օրից մինչև հիմա զատիկներն ու թիթեռները սև պուտիկներ

ունեն: Ու մինչև այսօր փոքրիկները ուրախանում են զատիկ բռնելիս, բայց նրանք երկար չեն մնում, թռչում գնում են: Ասում են՝ զատիկները դեռ հիշում են . . .